յի իշխանություններին և ժողովրդին՝ բուլղարահայ համայնքի նկատմամբ դրսևորվող ջերմ և հոգատար վերաբերմունքի համար:

Հանդիպմանը խոսվեց նաև Հայ Առաքելական և Բուլղար Ուղղափառ Եկեղեցիների փոխհարաբերությունների մասին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԲԸՄ ՆԱԽԱԳԱՀ ՊԵՐՃ ՍԵԴՐԱԿՅԱՆԻՆ

Ապրիլի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչության նախագահ Պերճ Սեդրակյանին:

Ողջունելով ՀԲԸՄ նախագահի հերթական այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունը իր գնահատանքը հայտնեց պրն Սեդրակյանին բոլոր ազգանպաստ այն բարեգործական ծրագրերի համար, որ ՀԲԸՄ-ն իրականացնում է Հայաստանում և Սփյուռքում: Վեհափառ Հայրապետը նաև գոհունակություն հայտնեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և ՀԲԸՄ-ի միջև առկա սերտ համագործակցության համար:

Իր հերթին ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը, մեծապես կարևորելով Եկեղեցու և ՀԲԸՄ-ի համագործակցությունը, վստահեցրեց, որ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը պիտի շարունակի զորավիգ լինել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին նրա ազգային-եկեղեցական առաքելության արդյունավետ իրագործման մեջ:

Հանդիպմանը անդրադարձ կատարվեց նաև ազգային կյանքը հուզող խնդիրներին, ի մասնավորի հայորդիների քրիստոնեական դաստիարակությանը և հայեցի կրթությանը առնչվող հարցերին: Վեհափառ Հայրապետն ու ՀԲԸՄ նախագահն ընդգծեցին համագործակցության կարևորությունը և անհրաժեշտությունը համատեղ ջանքերով հաղթահարելու աշխարհասփյուռ հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ